

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ՇԱՀԷ ԱՐՔԵՊՍ. ԱՃԷՄԵԱՆԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՏՕՆԻՆ (30 Մայիս 1993 թ.)

Վեհափառ Հայրապետ,

Հոգեգալուստի այս Կիրակիին, կ'ուզեմ թարգմանը հանդիսանալ նախ բոլոր ներկաներուն այստեղ, շնորհաւորելու համար այս մեծ տօնը և մաղթելու, որ երկար, երկար տարիներ Լուսաւորչի Ս. Աթոռն ըրած մեր Եկեղեցւոյ Վերնատունը, բաշխէք Ս. Հոգիին շնորհները մեր Եկեղեցիներուն և մեր հաւատացեալ ժողովուրդին: Դուք՝ մեր մեծ ռաբունապետը, որուն իմաստութիւնն ու խորհուրդները՝ թթխմորը հայկական մեր կեանքին խորանան մեր գիտակցութեան մէջ և շարունակեն առաջնորդել մեզ, ինչպէս ըրած են միշտ, սիրոյ, եղբայրութեան և միութեան ճանապարհով դէպի միասնականութիւնը մեր Ազգին: Թող քաջ Հովուապետի ձեր կոչերը հաւաքեն ձեր բանաւոր հօտը ձեր շուրջ, օրհնելու համար զԱստուած հարցն մերոց իր բոլոր բարիքներուն համար:

«Երանի ազգի որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա և յոյս նորա ի Տէր Աստուած է»:

Այսպէս կ'ըսէ Դաւիթ մարգարէն իր սաղմոսներէն մէկուն մէջ. «Երանի այն ազգին, որուն օգնականը Յակոբի Աստուածն է և այն ազգին, որուն յոյսը դրուած է Աստուծոյ վրայ»:

Այսօր Հոգեգալուստ է: Այսօր, մեր բոլոր Եկեղեցիները կը լեցուին Ս. Հոգիի խորհուրդով, այն խորհուրդով, որ յայտնուեցաւ Առաքեալներուն, երբ Աստուծոյ Հոգին իջաւ անոնց վրայ և վերածեց զանոնք Աստուծոյ պատգամաւորներուն: Իրենք լեցուեցան Ս. Հոգիով և վառեցին աշխարհը անոր կրակով:

Աշխարհի արարչութենէն ետք, որ քառասը վերածեց տիեզերքի, Ս. Հոգիին գալուստը կը հանդիսանայ թերևս աստուածային մեծ միջամտութիւնը մարդկային հոգիէն ներս, որմէ ծնունդ առաւ նոր մարդը:

Ի՞նչ էր պատահածը: Պատահածն այն էր, որ Յիսուսի 12 աշակերտները, Յիսուսի մայրը և աւելի ընկերուհիները, նաև խումբ մը հետևորդներ Յիսուսի, որոնք ինքզինքին կը կոչէին Յիսուսի եղբայրներ, հաւաքուած էին երկիւղածութեամբ նոյն այն սենեակին մէջ, ուր տեղի ունեցած էր վերջին ընթրիքը: Այդ էր Վերնատունը՝ Սիոն լեռան բարձունքին, ուր Յիսուսի աշակերտները և հետևորդները կը հաւաքուէին տօնելու համար օրուան տօնը:

Այդ օր Պենտեկոստէի տօնն էր, երբ Հրեայ ժողովուրդը կը յիշէր այն մեծ հրաշքը, որով Սինայի բարձունքին վրայ Աստուած խօսած էր Մովսէսի և տուած անոր տասնաբանեայ պատուիրանները: Եւ ահա, երբ անոնք կ'աղօթէին, դղրդեցաւ երկիրը, երկինքէն լսուեցաւ սարսափելի հովի մը ձայնը և կրակէ լեզուներ իջան անոնց գլուխին վրայ: Պատահեցաւ մեծ հրաշքը: Վերնատան մէջ հաւաքուած Յիսուսի աշակերտները եղան նոր մարդիկ: Անոնք ձկնորսներ էին, պարզ մարդիկ, երբեմն երկչոտ, յաճախ դժուարութեամբ ըմբռնող Քրիստոսի ուսուցումները, որոնք երեք տարիներ հետևած էին Յիսուսի, սակայն քիչ բան հասկցած անոր մասին և անոր էութեան մասին: Նոյն մարդիկը, կրակէ լեզուներու ազդեցութեամբ բոլորովին փոխուած, դուրս կուգային Վերնատունէն իբրև նոր մարդիկ, առաքեալներ, լեցուն Աստուծոյ խօսքով, խօսքով մը, որ այլևս տկարութիւն չէր ճանչնար, խիզախ և յանդուգն, ուժեղ և ինքնավստահ, որ կը խռովէր Հրեաները ու կ'ըսէր անոնց. «Դուք ի զուր խաչեցիք Մեծ Վարդապետը, որովհետև անիկա Աստուծոյ Որդին էր: Ձեր խաչած Յիսուսը յարութիւն առաւ մեռելներէն և համբարձաւ երկինք ու այժմ նստած է Աստուծոյ աջին»: Հոգիով զեղուն աշակերտները, որոնք Գեթսեմանիի մէջ տկարացած էին և փախուստ տուած, երբ ձերբակալուած էր իրենց Վարդապետը, այժմ բարձրաղաղակ կը յայտարարէին Յիսուսը ձերբակալող Հրեաներուն լեզու առած իրենց հաւատքը թէ կատարուած են մարգարէներուն նախագուշակութիւնները Մեսիայի մասին Յիսուսի խաչելութեամբ, թաղումով և հրաշափառ յարութեամբ: Այդ է խորհուրդը Հոգեգալուստի տօնին՝ այլափոխութիւնը մարդուն Ս. հոգիի ներգործութեամբ:

Այդպէս այլափոխուած աշակերտներու փոքր խումբը, Յիսուսի այդ զինուորներու փոքր թիւը, զինուած միայն Աստուծոյ խօսքին զօրութեամբ, տարածեցին քրիստոնէական հաւատքը աշխարհի բոլոր ծագերուն: Անոնք գացին երկրէ երկիր և, ինչպէս այլափոխուած էին իրենք, նոյնպէս այլափոխեցին մարդիկ և ազգեր, որոնք լսեցին անոնց գատգամը: Հոն, ուր հասան անոնց քայլերը, անոնք մաքրեցին երկիրը սնափառութիւններէն և քանդեցին կռապաշտ տաճարները, կառուցանելու համար պաշտամունքի նոր տուներ և բարձրացնելու համար մարդոց սրտին մէջ՝ հոգիի տաճարներ:

Այսօր մենք կը տօնենք Եկեղեցիին հաստատութեան տօնը, այն Եկեղեցիին, ուր պիտի շարունակէ իջնել Աստուծոյ Հոգին, բաշխուելու համար բոլոր հաւատացեալներուն:

«Երանի ազգի, որոյ Տէր Աստուած Յակոբայ օգնական է նմա»:

Սաղմոսերգուին այս բառերը սքանչելի կերպով կը պատշաճին այսօր մեր իրականութեան, որովհետև մենք ևս օգնական ունեցանք Յակոբի, այսինքն նահապետներու և մարգարէներու Տէր Աստուածը և մեր յոյսը դրինք մեր հայրերու Աստուծոյն վրայ:

Եղան ու կան աշխարհի վրայ բազմաթիւ ազգեր, թագաւորութիւններ, իշխանութիւններ, կայսրութիւններ, որոնց պատմութիւնը գրուեցաւ սուրի ծայրով և որոնց բանակներուն յաղթանակները արձանագրուեցան յաղթական կամարներու վրայ: Անոնց պատմութիւնը շարք մըն է նուաճումներու, յաղթանակներու, նուաճումներու, գերեվարութիւններու և ճնշումներու այլ ազգերու վրայ: Անոնց փառքը՝ ստրկացումն է ուրիշներուն: Անոնց մասին չէ՞ որ ըսուած է մարգարէին խօսքը՝ «Երանի ազգին...»

Եղած են ուրիշ թագաւորութիւններ, կայսրութիւններ և մեծ պետութիւններ, որոնց պարծանքը արդարօրէն եղած է անոնց միտքը և ստեղծագործ

հանճարը: Անոնք ստեղծած են քաղաքակրթութիւններ և տուած են աշխարհին՝ ինքնատպութիւն, գրականութիւն, լեզու, ճարտարապետութիւն, գիտութիւն և, մէկ խօսքով, մշակոյթ: Տարբեր առաջիններէն, ասոնք չե՛ն առած ուրիշներէն, այլ տուած են ուրիշներուն: Սակայն ասոնց մասին եւս չէ՛ ըսուած մարգարէին խօսքը՝ «Երանի ազգին...»:

Կան նաև պատմութեան մէջ ուրիշ տեսակի ազգեր, որոնց պատմութիւնը կեդրոնացած է անոնց հայրերու պաշտած Աստուծոյ վրայ: Ասոնց իմաստութիւնը և ամբողջ ուսուցումը հոսած է միակ աղբիւրէ մը՝ Աստուծոյ վրայ կեդրոնացած իրենց հաւատքէն: Ասոնք տուած են մարդկութեան իմաստութիւն, որ կը բխի Աստուծոյ վախէն. «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն...»: Ասոնց ստեղծած քաղաքակրթութիւնը հիմնուած է մարդկային արժէքներու վրայ, քանի որ դաւանած են մարդը՝ գերագոյն արժէք, ի նմանութիւն Աստուծոյ: Ասոնք տուած են մարդկութեան բարոյական բարձրագոյն սկզբունքները, հիմնուած մարդու պատկերացումին վրայ իբրև «որդի Աստուծոյ»: Այս ազգերն են, որոնք հոգի մը ունին, իրենց յատուկ:

Այսպիսին է մեր ազգը: Աստուծոյ վրայ կեդրոնացած մեր հոգիին մէջ գտած ենք մենք մեր ինքնութիւնը և Անոր վրայ դրուած մեր յոյսին մէջ՝ մեր հոգին: Մեր ուժն ու ներշնչումը ճառագայթած են այն լոյսէն, որ կը ծագի հոգիի երկինքէն և կը տարածուի ամբողջ ազգի մը հոգիին մէջ:

Այն օրէն ի վեր, երբ մեր հայրերը նայեցան Արարատին և այնտեղ տեսան Նոյի տապանը՝ խորհրդանիշ արդար մարդու փրկութեան,

այն օրէն ի վեր, երբ նայեցանք Արագածին և այնտեղ՝ մեր հաւատքի աչքերով, անսասան հաւատքի աչքերով տեսանք Լուսաւորչի կանթեղը՝ խորհրդանիշ Աստուծոյ պահապան աչքին,

այն օրէն ի վեր, երբ հաւատացինք Ս. Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքին՝ Միածինին էջքը Արարատեան դաշտին և մեր թագաւոր Տրդատի ձեռքերով կանգնեցինք Լուսոյ Խորան Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, խորհրդանիշ հայկական Պենտեկոստէին,

այն օրէն ի վեր, մենք ևս ունեցանք իբրև օգնական մեր հայրերու Աստուածը և մեր յոյսը դրած Անոր վրայ, նայեցանք մահուան իբրև դուռ անմահութեան:

Այս է խորհուրդը այսօրուան տօնին՝ Հոգեգալստեան տօնին, մեզի Հայերուս համար:

Իսկ այսօր, երբ Մայր Տաճարին մէջ կը կատարուի մաղթանք հայրապետական, աղօթելու համար ազատ և անկախ մեր հայրենիքին, անոր նորահաստատ պետականութեան, անոր իմաստուն ղեկավարութեան ուժեղացման, բարգաւաճումին, յաջողութեան և յաղթանակին համար, բոլորս կը նայինք մեր երկրին յոյսի աչքերով, յոյսի, որ բնաւ սպիտի չպարտուի մեր հաւատքը:

Ազգեր, որոնք զէնքի ուժով զօրացան, զէնքի ուժով ալ պարտուեցան:

Ազգեր, որոնք պարծեցան իրենց ստեղծած մեծ քաղաքակրթութիւններով, մեծ հետքեր թողուցին մարդկութեան պատմութեան մէջ և անցան:

Սակայն անոնք, որոնք իրենց պատմութիւնը գրեցին իբրև յոյսի և աստուծոյ թագաւորութեան պատմութիւն, անոնք ապրեցան: Թէև անոնց թագաւորները պարտուեցան, անոնց քաղաքները աւերուեցան, անոնց գիւղերը այրեցան և անոնց ժողովուրդը ճաշակեց դառնութիւնները աքսորի ճամբաներուն, սակայն անոնք օտարութեան մէջ իսկ պահեցին կանգուն իրենց հոգին: Երբ եկաւ օրը, անոնք վերադարձան ու կանգնեցին դարձեալ իրենց

քաղաքը, վերաշինեցին իրենց գիւղը, մշակեցին իրենց արտը և, ամէն անգամ, երբ ծաղկեցաւ ծառը և հասունացաւ պտուղը, անոնք փառք տուին իրենց օգնական Աստուծոյն:

Այսօր, նոյն փառաբանութեան երգով կը բարձրացնենք մեր ձայնը առ Աստուած և կ'աղօթենք, որ ոգոտ և անկախ մեր հայրենիքը ուժեղանայ, կը մաղթենք, որ մեր պետութիւնը զօրանայ, կը ցանկանք, որ մեր երկիրը ծաղկի, կը յուսանք, որ կեանքը բարգաւաճի և Աստուծոյ աջը հեռու պահէ մեր սահմաններէն ամէն չարիք: Մայր Տաճարին մէջ մատուցուած յատուկ մաղթանքով, մենք կ'աղօթենք, որ զօրանայ բազուկը մեր քաջամարտիկներուն, որոնք առաջնորդուած Հայ հոգիով, Վարդանանց նման կ'արհամարհեն մահը և չեն սակարկեր իրենց կեանքը, որովհետև կը հաւատան մահով ապահովուած անմահութեան:

Սիրելի Հայորդիներ,

Մի քանի օրեր առաջ՝ Մայիս 28-ի գարնանային առաւօտուն, երբ կը դիտէինք մեր հպարտ բանակին տողանցքը և կը նայէինք բարձրօրէն ծածանող ազգային մեր դրօշին, այնպէս թուեցաւ թէ հեռուներէն այլ ձայներ և երգեր կուգային: Կարծք թէ զինուորներու հաստատ քայլերուն և շեփորներու ձայնին կը խառնուէին այլ ձայներ: Այնպէս կ'երևէր մեր աչքին, թէ նոր տեսիլք մը բացուի մեր երկինքին՝ Մասիսներուն դիմաց: Եզեկիէլ մարգարէի տեսիլքին նման, կ'երևէին անապատներու աւազէն բարձրացող ոսկորներ, որոնք կ'արթննային և յարութիւն կ'առնէին: Սուրիոյ անապատներուն ցրուած Հայու ոսկորնե՞րն էին անոնք, որ սրինգ դարձած իրենց երգը կը խառնէին անկախութեան տօնի մեր երգերուն: Փառքի եղանակներ էին անոնք, որ կը խռովէին մեր սիրտերը, բայց յոյսի և վերազարթնումի խոստումներ էին նոյնպէս, թէ պիտի ապրինք, յաւիտեան պիտի ապրինք վերաշինելու համար մեր հայրենիքը:

Թող անոնց երգը ըլլայ նաև մերը և բարձրացնենք զայն Աստուծոյ կըրկնելով. «Փառք քեզ, Տէ՛ր, փառք քեզ, յաղագս ամենայնի Տէր, փառք քեզ»: